

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ «ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ» ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ԲԱԶԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ուժի մեջ է 01.07.2020թ. -ից

Արժույթ	Ավանդի նվազագույն գումար	Ավանդի առավելագույն գումար	Տոկոսագումարի վճարում	Ժամկետ
			732 օր	1095 օր

AMD	10,000,000	30,000,000	Ժամկետի վերջում	5.00%	5.50%
-----	------------	------------	-----------------	-------	-------

- Ավանդի տոկոսադրույքը կախված է ավանդի հիմքում ընկած արժեթղթի գնի տատանումներից:
- Ավանդի հիմքում ընկած արժեթղթի գնի աճի դեպքում Ավանդատուն ստանում է բազային տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարի և Ավանդատուի մասնակցության գործակցով հաշվարկված արժեթղթի մաքուր գնի աճի հանրագումարը:
- Պայմանագրով սահմանված ժամկետի վերջում, Ավանդի հիմքում ընկած Արժեթղթի գնի աճի բացակայության դեպքում Հաճախորդը ստանում է միայն պայմանագրով սահմանված բազային տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարը:
- Հաճախորդն իրավունք չունի ավանդի գործողության ընթացքում փոփոխելու՝ ավելացնելու կամ նվազեցնելու ավանդի գումարը:
- Հաճախորդն կարող է ավանդային պայմանագիրը վաղաժամկետ լուծել Բանկի համաձայնությամբ՝ ավանդային պայմանագրով նախատեսված դեպքերում: Այդ դեպքում Բանկը կատարում է վերահաշվարկ՝ ավանդի գումարից գանձելով արդեն իսկ վճարված տոկոսագումարները, և վճարելով տվյալ պահին գործող և Բանկի կայքէջում հրապարակված՝ Ավանդի արժույթով ցպահանջ ավանդատեսակի համար Բանկի կողմից հաստատված տարեկան տոկոսադրույքին համապատասխան չափով հավելագրված տոկոսագումար :
- Այլ լրացուցիչ պայմանները կարգավորվում են պայմանագրով կամ լրացուցիչ համաձայնագրով:
- Հաճախորդն իրավունք ունի իր կողմից ներդրված ավանդի գրավով ստանալ վարկ՝ Բանկի կողմից սահմանված պայմաններով: Եթե հաճախորդը վարկի ստացման դիմումը ներկայացնում է մինչև տվյալ բանկային օրվա ժամը 12:00-ը ապա վարկը տրամադրվում է հաճախորդին մինչև տվյալ բանկային օրվա գործառնական օրվա ավարտը: Եթե հաճախորդը վարկի

ստացման դիմումը ներկայացնում է տվյալ բանկային օրվա ժամը 12:00-ից հետո ապա վարկը տրամադրվում է հաճախորդին հաջորդ բանկային օրվա ընթացքում:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ուժի մեջ է 09.04.2021թ.-ից

ԱՐԺՈՒՅԹ					
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Շվեյցարական ֆրանկ	Ֆունտ ստեռլինգ
3.00%	0.50%	0.25%	1.00%	0.00%	0.00%

Տոկոսագումարը հաշվարկվում է, եթե ամսվա ընթացքում հաշվի միջին օրական մնացորդը ըստ համապատասխան արժույթների կազմում է նվազագույնը 500,000 ՀՀ դրամ, 2,000 ԱՄՆ դոլար, 2,000 Եվրո, 150,000 ՌԴ ռուբլի: Տոկոսագումարը վճարվում է հաշվարկմանը հաջորդող ամսվա առաջին բանկային օրը: Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց գծով հաշվարկված տոկոսագումարից պահվում է 10.0% ոչ ռեզիդենտի շահութահարկ:

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ

Հասցե՝ Վ. Սարգսյան 10, Երևան 0010, Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ +374 60 757 000

Ֆաքս՝ +374 10 540 675

Էլ-փոստ՝ info@armswissbank.am